

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1) Ակարում մթնոլորտի ո՞ր շերտն է նշված *Ա* տառով.

- 1) ներքնոլորտը
- 2) վերնոլորտը
- 3) արտաքին ոլորտը
- 4) ջերմոլորտը



2) Միջին մասշտաբի քարտեզներ են.

- 1) 1 : 10 000 — 1 : 200 000
- 2) 1 : 200 000 — 1 : 1 000 000
- 3) 1 : 1 000 000 — 1 : 5 000 000
- 4) 1 : 5 000 000 — 1 : 10 000 000

3) Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 4000 կմ է, իսկ քարտեզում՝ 20 սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 20 000 000
- 2) 1 : 40 000 000
- 3) 1 : 60 000 000
- 4) 1 : 80 000 000

4) Երկրի՝ իր առանցքի շուրջը պտույտի հետևանք չէ.

- 1) գիշեր-ցերեկ հերթափոխությունը
- 2) տարվա եղանակների առաջացումը
- 3) շարժվող մարմինների հետագծի շեղումը իր սկզբնական ուղղությունից
- 4) ժամային գոտիների առանձնացումը

5


Երկրի մակերևույթում այն տեղը, որը երկրաշարժի օջախի վերևում է և նրան ամենամոտն է, կոչվում է.

- 1) հիպոկենտրոն
- 2) էպիկենտրոն
- 3) սեյսմոգրաֆ
- 4) ցունամի

6

Ըստ նկարի՝ տարվա n° ր եղանակն է հարավային կիսագնդում.

- 1) գարուն
- 2) ամառ
- 3) աշուն
- 4) ձմեռ



7

Բնութագրումով որոշել լեռների հասակը.

Այդ հասակի լեռները սովորաբար բարձր են, կատարները՝ սրածայր, լանջերը՝ զառիթափ: Բնշ հասակի լեռներ են.

- 1) երիտասարդ
- 2) հին
- 3) միջին
- 4) հնագույն

8


Երևան քաղաքում հունվարի 10-ին գրանցվել են օդի հետևյալ ջերմաստիճանները՝ -5° , -9° , -6° , -4° , $+3^{\circ}$, $+5^{\circ}$, $+2^{\circ}$, -2° : Օդի միջին օրական ջերմաստիճանը կլինի.

- 1) 2°
- 2) 3°
- 3) -2°
- 4) -4°

9


Նկարում կետի n° ր բարձրությունն է նշված F տառով.

- 1) հարաբերական
- 2) բացարձակ
- 3) առավելագույն
- 4) միջին



10 Նկարում *Ա* տառով նշված է գետի.

- 1) ողողատը
- 2) ջրհավաք ավազանը
- 3) ջրբաժան գիծը
- 4) հունը



11 «Գետ — հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Հուանիտ — գարուն
- 2) Օրինկո — ձմեռ
- 3) Ջամբեգի — ամառ
- 4) Եփրատ — ձմեռ

12 Ո՞ր բնական զոնային են առավել բնորոշ սառցադաշտերի ներգործությամբ ստեղծված ռելիեֆի ձևերը.

- 1) անապատների և կիսաանապատների
- 2) արկտիկական անապատների
- 3) բարեխառն գոտու տափաստանների և անտառատափաստանների
- 4) սավաննաների և նոսր անտառների

13 Բնութագրումով որոշել նեղուցը.

Այդ նեղուցը միացնում է երկու օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է.

- 1) Կուկի
- 2) Թորեսի
- 3) Մագելանի
- 4) Բերինգի

14 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անցումային կլիմայական գոտիներում օդի ջերմաստիճանի, տեղումների քանակի և գերիշխող քամիների սեզոնային փոփոխություններ չկան:
- 2) Անցումային կլիմայական գոտիները այդպես են կոչվում այն պատճառով, քանի որ դրանք անցնում են տաք և ցուրտ կլիմաների միջև:
- 3) Անցումային կլիմայական գոտիները ևս ունեն իրենց բնորոշ օդային զանգվածները:
- 4) Տարվա տարբեր սեզոններին անցումային կլիմայական գոտիներ են թափանցում տարբեր տիպի օդային զանգվածներ:

15

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Յուրաքանչյուր ժամային գոտի ընդգրկում է 30°:
- 2) Միջօրեականի վրա տվյալ պահին դիտված ժամանակը կոչվում է դեկրետային ժամանակ:
- 3) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է գլխավոր միջօրեականով:
- 4) Յուրաքանչյուր ժամային գոտու համար գոտիական ժամանակ է ընդունվում նրա կենտրոնով անցնող միջօրեականի տեղական ժամանակը:

16

Բոսֆորի նեղուցով ո՞ր ծովերն են միանում.

- 1) Ադրիատիկ և Հոնիական
- 2) Ազովի և Սև
- 3) Եգեյան և Մարմարա
- 4) Սև և Մարմարա

17

Աֆրիկայի մերձհասարակածային գոտու գետերը հորդանում են.

- 1) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը
- 2) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը
- 3) յուրաքանչյուր կիսագնդի ձմռանը
- 4) ողջ տարվա ընթացքում

18


Ի՞նչ ծագում ունի Մեծ արգելախութը.

- 1) մայրցամաքային
- 2) հրաբխային
- 3) տեկտոնահրաբխային
- 4) կորալային

19

Ո՞ր օվկիանոսային հոսանքն է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Մոզամբիկի
- 2) Բենգելյան
- 3) Կանարյան
- 4) Սոմալիական



20

Ո՞ր պետությունն է քարտեզում նշված Է տառով.

- 1) Չադ
- 2) Նիգեր
- 3) Կամերուն
- 4) Գաբոն

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ են ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:
- 2) «Ժողովրդագրական պայթյունը» բնութագրվում է բնակչության դանդաղ աճով և բնորոշ է զարգացած երկրներին:
- 3) Բնակչության թվի կտրուկ աճի հետևանքով զարգացած երկրներում ստեղծվել է «ժողովրդագրական ճգնաժամ»:
- 4) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է երկրի բնակլիմայական պայմաններով:

22

Ցեղակից լեզուների ամբողջությունը, որն իրենից ներկայացնում է լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմնական, ամենախոշոր միավորը, կոչվում է.

- 1) լեզվաընտանիք
- 2) լեզվախումբ
- 3) ժողովուրդ
- 4) էթնոս

23

Բնութագրումով որոշել պետությունը.

Հարավարևմտյան Ասիայի այս պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աձեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Վրաստանը
- 2) Ուկրաինան
- 3) Ադրբեջանը
- 4) Իրանը

24

2005 թ. ՀՀ է ժամանել 10441 մարդ, մեկնել՝ 18135 մարդ: Միգրացիայի ծավալը հավասար կլինի.

- 1) 28576 մարդ
- 2) 7694 մարդ
- 3) 8135 մարդ
- 4) 8576 մարդ

25

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ջարգացած երկրներում ցածր է ուրբանիզացման մակարդակը:
- 2) Ջարգացող երկրներում ցածր են ուրբանիզացման տեմպերը:
- 3) Կեղծ ուրբանիզացումը բնորոշ է զարգացող երկրներին:
- 4) Խմբային գյուղական տարաբնակեցումը բնորոշ է Կանադային և Ավստրալիային:

26

Միջերկրական ծով ելք ունեցող պետություն է.

- 1) Լիբանանը
- 2) Իրաքը
- 3) Հորդանանը
- 4) Սաուդյան Արաբիան

27

Ո՞ր երևույթն է կոչվում է «քիմիական արտադրության արտահանում».

- 1) զարգացած երկրների քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները զարգացող երկրներում տեղաբաշխելը
- 2) քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի և արտադրությունների արդյունաբերության այլ ճյուղերի հետ համատեղ միջճյուղային համալիրների ստեղծումը
- 3) քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանումը
- 4) քիմիական արտադրանքը արդյունաբերության այլ ճյուղերում օգտագործելը

28

Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության թվով աշխարհի երկրորդ պետությունն է:
- 2) Երկրում շատ բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 3) Աչքի է ընկնում բնակչության բնական աճի բարձր ցուցանիշով:
- 4) Երկրի բնակչության մեծամասնությունը դավանում է հնդուականություն:

29


Բնակչությունը խիստ անհավասարաչափ է տեղաբաշխված.

- 1) Չինաստանում և Կանադայում
- 2) Լատվիայում և Լիտվայում
- 3) Ուկրաինայում և Սոլդովայում
- 4) Բելգիայում և Դանիայում

30

Դիագրամում տրված է աշխարհի բնակչության բաշխումն՝ ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում 1 թիվը.


- 1) 500–1000 մ
- 2) 1000–2000 մ
- 3) մինչև 200 մ
- 4) 200–500 մ



31

Քարտեզում ո՞ր տառով են նշված բնակչության առավել բարձր ծնելիության ցուցանիշ ունեցող երկրները.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



32

Ո՞ր շարքի երկրներն են առաջատար երկաթի հանքաքարի պաշարներով.

- 1) Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա
- 2) Չինաստան, Ուկրաինա, Թուրքիա
- 3) Ավստրալիա, Ռուսաստան, Բրազիլիա
- 4) ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա

33

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ բոլոր գետերը պատկանում են Կասպից ծովի ներքին հոսքի ավազանին:
- 2) Կուրի և Արաքսի միջև ջրբաժան գիծն անցնում է Ջավախքի, Փամբակի, Արեգունու և Սևանի լեռների կատարամերձ տեղամասերով:
- 3) Կուրի և Արաքսի ջրհավաք ավազանների միջև ջրբաժան գիծը ՀՀ գլխավոր կլիմայաբաժանն է:
- 4) ՀՀ Արաքսի ավազանին պատկանող գետերը բացառապես սնվում են ձնաանձրևային ջրերով:

34

Գեղարքունիքի մարզում երկաթուղային կայարան ունեն.


- 1) Մարտունին և Գավառը
- 2) Վարդենիսը և Վարդենիկը
- 3) Սոթքը և Սևանը
- 4) Ճամբարակը և Մարտունին

35 Ո՞ր գետը Արագածոտնի մարզի տարածքով չի հոսում.

- 1) Մեծամոր
- 2) Գեղարոտ
- 3) Ամբերդ
- 4) Քասաղ

36 Ո՞ր գետն է քարտեզում նշված Գ տառով.

- 1) Ողջի
- 2) Մեղրիգետ
- 3) Հագարու
- 4) Որոտան



37 Ո՞ր ջրեկն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Հրազդանի (Աթարբեկյան)
- 2) Քանաքեռի
- 3) Սևանի
- 4) Արգելի

38 Անտառային ռեսուրսներով աղքատ երկրներ են.

- 1) Կանադան և Ֆինլանդիան
- 2) Բրազիլիան և Ինդոնեզիան
- 3) Մալայզիան և Կոլումբիան
- 4) Ավստրալիան և Եգիպտոսը

39

Տրվածներից ո՞րը պետք է առաջնահերթ հաշվի առնել բնակավայրում թունավոր արտանետումներ ունեցող ձեռնարկությունները տեղաբաշխելիս.

- 1) բնակավայրի տարեկան միջին ջերմաստիճանը
- 2) քամիների վարդը
- 3) էլեկտրատրանսպորտի քանակը
- 4) անթափոն արտադրությունների առկայությունը

40

Ո՞ր պատասխանն է ճիշտ.

Որոշակի կլիմայական պայմաններում, միայն տարվա տաք եղանակներին արեգակնային ճառագայթների ազդեցությամբ մթնոլորտում առաջնային աղտոտող նյութերը քայքայվում են և առաջանում են նոր նյութեր: Այդ երևույթը կոչվում է.

- 1) թթվային անձրև
- 2) լուսաքիմիական սմոգ
- 3) ջերմոցային էֆեկտ
- 4) ջերմային աղտոտում

41

Գրել այն սառը ծովային հոսանքների համարները, որոնք պատկանում են Խաղաղ օվկիանոսին.

- | | |
|------------------|----------------|
| 1) Բենգելյան | 5) Լաբրադորյան |
| 2) Կալիֆոռնիական | 6) Օյասիո |
| 3) Կանարյան | 7) Սոմալիական |
| 4) Ֆոլկլենդյան | 8) Պերուական |

42

Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական պայթյունը».

- | | |
|--------------|-------------|
| 1) ԱՄՆ | 5) Գերմանիա |
| 2) Ճապոնիա | 6) Իտալիա |
| 3) Ռուսաստան | 7) Քենիա |
| 4) Պակիստան | 8) Լեհաստան |

43

Գրել այն ջրէկների համարները, որոնք չեն մտնում Հրագդանի կասկադի մեջ.

- | | |
|-------------|------------|
| 1) Քանաքեռի | 5) Այրումի |
| 2) Տաթևի | 6) Սևանի |
| 3) Արգելի | 7) Արգնիի |
| 4) Երևանի | 8) Շամբի |

44

Տրված պետությունները դասավորել ուրբանիզացիայի մակարդակի աճման կարգով.

- 1) Մեծ Բրիտանիա
- 2) Ռուսաստան
- 3) Հնդկաստան
- 4) Բուրսան

45

Աշխարհի վառելիքաէներգետիկ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ

- 1) Նավթի հանույթի ծավալով առաջատար երկրներ են Ճապոնիան, Գերմանիան և Ֆրանսիան:
- 2) Ածխարդյունաբերությունն աշխարհի վառելիքային արդյունաբերության ամենաարագ զարգացող ենթաճյուղն է:
- 3) Էլեկտրաէներգետիկայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն ջրաէլեկտրակայանները:
- 4) Ատոմային էներգետիկան զարգացած է տնտեսապես զարգացած երկրներում, որոնք վառելիքով ու ջրաէներգետիկ ռեսուրսներով համեմատաբար աղքատ են:
- 5) Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը համալիր ճյուղ է՝ բաղկացած վառելիքային արդյունաբերությունից և էլեկտրաէներգետիկայից:
- 6) Վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման հաջորդական երեք փուլերն են ածխայինը, միջուկայինը և նավթագազայինը:

Բ մակարդակ

46

Քաղաքն արևելյան երկայնության 20°-ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

- 1) 2-րդ
- 2) 1-ին
- 3) 4-րդ
- 4) 0-ական

47

Լեռը օվկիանոսի ափին է՝ 45° գուգահեռականի վրա: 0° ջերմաստիճանի դեպքում մթնոլորտային ճնշումը նրա գագաթին հավասար է 450 մմ ս. ս.: Լեռան բացարձակ բարձրությունը կլինի.

- 1) 1345 մ
- 2) 2495 մ
- 3) 3100 մ
- 4) 4500 մ

48

Ո՞ր շարքի ջրավազանները նույն օվկիանոսի մասեր չեն.

- 1) Կարմիր ծով, Պարսից ծոց, Արաբական ծով
- 2) Բարենցի ծով, Լապտնների ծով, Արևելասիբիրական ծով
- 3) Հյուսիսային ծով, Բիսկայան ծոց, Բալթիկ ծով
- 4) Օխոտի ծով, Դեղին ծով, Բենգալական ծոց

49

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օվկիանոսային տաք հոսանքները խոչընդոտում են տեղումների առաջացմանը:
- 2) Ծովային կլիմա ունեցող շրջաններում տեղումները տարվա ընթացքում բաշխվում են հավասարաչափ:
- 3) Անտիցիկլոններին բնորոշ են տեղատարափ անձրևները:
- 4) Հասարակածային կլիմայական գոտում է այն վայրը, որտեղ գրանցվել է Երկրագնդի վրա տեղումների առավելագույն քանակը:

50

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
- 2) Ավստրալիայում բացակայում է հասարակածային կլիմայական գոտին:
- 3) Եվրասիայում անապատների բնական զոնան ձևավորվում է արևադարձային, մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիներում:
- 4) Հարավային Ամերիկայի մերձարևադարձային կլիմայական գոտում տարածվում է տայգայի բնական զոնան:

51 Նախագահական հանրապետություններ են.

- 1) Թուրքիան և Իսպանիան
- 2) Բրազիլիան և ԱՄՆ-ը
- 3) Հնդկաստանը և Գերմանիան
- 4) Ճապոնիան և Իտալիան

52 «Ժողովուրդ — կրոն» գույգերից ընտրել սխալը.

- 1) պարսիկներ — մահմեդականություն
- 2) ճապոնացիներ — կոնֆուցիականություն
- 3) իսպանացիներ — քրիստոնեություն
- 4) մոնղոլներ — բուդդայականություն

53 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ջուտն ու սիսալը հացահատիկային մշակաբույսեր են:
- 2) Թեյի համաշխարհային բերքի 3/5-ը ապահովում են Եվրոպայի երկրները:
- 3) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 4) Վուշը բարեխառն գոտու սակավ ջերմասեր մշակաբույս է:

54 Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բրնձի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներից է:
- 2) Նավահանգստային քաղաքներում լայն զարգացում է ստացել նավթավերամշակող արդյունաբերությունը:
- 3) Հյուսիսային շրջանն իր զարգացման մակարդակով էականորեն զիջում է հարավային շրջանին:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:

55 Բնութագրումով որոշել տարածաշրջանը.

Եվրոպա աշխարհամասի այս տարածաշրջանը հարուստ է անտառային և ջրային ռեսուրսներով: Տարածաշրջանի երկրները բնութագրվում են բնակչության ցածր բնական աճով, իսկ կյանքի միջին տևողությամբ աշխարհի առաջատարներից են: Հավատացյալ բնակչության հիմնական մասը քրիստոնյա բողոքականներ են: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

- 1) Արևելյան Եվրոպան
- 2) Արևմտյան Եվրոպան
- 3) Հյուսիսային Եվրոպան
- 4) Հարավային Եվրոպան

56

«Լեռնաշղթա — լեռնագագաթ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ուրծ — Արմաղան
- 2) Բարգուշատ — Մեծ Եղնախաղ
- 3) Միափորի — Լավվար
- 4) Սևանի — Քաշաթաղ

57

ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հանրապետության տարածքը բարեխառն կլիմայական գոտում է:
- 2) ՀՀ տարածքում ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Արագածի լանջին՝ Քարի լճի շրջանում:
- 3) Տարվա ընթացքում տեղումների նվազագույն քանակը թափվում է գարնան ամիսներին:
- 4) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):

58

Ընտրել «օգտակար հանածո — հանքավայր» համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------------|------------|
| 1) պղնձահրաքար | ա. Սվարանց |
| 2) պղնձամոլիբդեն | բ. Սոթք |
| 3) ոսկի | գ. Կապան |
| 4) երկաթաքար | դ. Ագարակ |

- 1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 4) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ

59

Ի՞նչն ընդհանուր չէ Սյունիքի և Լոռու մարզերի համար.

- 1) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղերից է գունավոր մետաղա-
ծուլությունը:
- 2) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 3) Տարածված են լեռնաանտառային լանդշաֆտները:
- 4) Սահմանակից են Ադրբեջանի Հանրապետությանը:

60

Տավուշի մարզի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են.

- 1) հացահատիկի մշակությունը և ոչխարաբուծությունը
- 2) պտղաբուծությունը և խոզաբուծությունը
- 3) կերաբույսերի մշակությունը և շերամապահությունը
- 4) կարտոֆիլի մշակությունը և թռչնաբուծությունը

61

Տրված պետությունները դասավորել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազման կարգով.

- 1) Բրազիլիա
- 2) Արգենտինա
- 3) Չինաստան
- 4) Հնդկաստան

62

Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.

- | | |
|---------------|----------------|
| 1) գերմանական | 5) հնդարիական |
| 2) թյուրքական | 6) հայկական |
| 3) սլավոնական | 7) քարթվելական |
| 4) ռոմանական | 8) իրանական |

63

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------|----------------|
| 1) Մոզամբիկի | 5) Գվիանական |
| 2) Գոլֆստրիմ | 6) Մուսսոնային |
| 3) Կուրո Սիո | 7) Ալյասկայի |
| 4) Գվինեական | 8) Բրազիլական |

64

Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.

- | | |
|---------------|------------|
| 1) Արարատ | 5) Արթիկ |
| 2) Վաղարշապատ | 6) Գորիս |
| 3) Արտաշատ | 7) Գյումրի |
| 4) Երևան | 8) Հրազդան |

65

Երկու քաղաքներ հասարակածի վրա են, որոնցից մեկն արլ. երկ. 90°-ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 50°-ի: Որոշել դրանց միջև ամենակարճ հեռավորությունը կիլոմետրերով:

(66-67) Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 6 մ² է, գետի ջրի արագությունը՝ 3 մ/վ.

66 Որոշել գետի ծախսը:

67 Որոշել գետի հոսքը 1 ժամում:

(68-69) Երկրի բնակչության թիվը 1,5 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ.

68 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

69 Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (%):

ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:
- 2) Արփայի գոգավորությունը Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է:
- 3) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:
- 4) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
- 5) Սևանա լիճը արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
- 6) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բազումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթան: